

«ինչպե՞ս ուրեմն այդ ընդարձակ տարածութեան մէջ՝ այդ լեռներու բարձրութենէն հայ կրօնք եւ հայ լեզու կրցեր էր ճամփայ գտնել եւ միացնել այդ ժողովուրդները հայ ազգութիւնը կազմելու համար»: Այդ մարդը, որ աչքերը տնկած Սասնեանց հզօր գահույից անկումը գուշակած էր, վասնզի ապականութիւնը եւ փտութիւնը տեսած էր թէ ի՞նչ աստիճանի հասած էին հոն Տիգրոսի մայրաքաղաքին մէջ, այդ մարդը, որ նոյնպէս Կոստանդնուպոլիս նոյն տեսարանը նկատած էր Բիւզանդական խարոյախ եւ թունալից կառավարութեան մէջ, եւ հիմա կը տեսներ Արաբիոյ անապատներէն վայրենի եւ բարբարոս կրօնամուլ ամբոխ մը, որ հազիւ թէ լսելի եղած աշխարհքիս՝ իբրեւ հրաբուխի բորբոքեալ գետ մը կը դիմեր, կը հասներ, կը տոչորէր յաջորդաբար Դամասկոս, Եփես, Երուսաղէմ, Յալէպ, Անտիոք, Մեմփիս, Աղեքսանդրիա, Տիգրոս, որ ոչինչ չէր ինչայէր, ոչ հասակ, ոչ սեռ, ոչ ալիք, ոչ սրբութիւն եւ ոչ կրօն, եւ որ սոսկալին է, կը տեսներ ուրի հրեղէն գետը հասած դիզուած Յայաստանի սահմանագլուխը սպառնալից. դառնացեալ կը մտածեր եւ իր բոլոր միտքն ու ջանքը հոն էր, որ այս պատուհասը հեռացնէ իւր հայրենեաց վրայէն: Եւ այս վիճակին դարման տանելու համար Յունաց Սպարապետը գնացեր տեսեր էր Կարին, եւ համոզեր էր զինքը ամենայն քաղցրութեամբ՝ զօրաւոր փաստերով եւ ապագային ահագին վտանգներն առաջ դնելով թէ պետք էր շարժիլ եւ շարժիլ ամէն զօրութիւն: Եւ ինք անգործ չի մնալով կը շրջեր գաւառէ գաւառ՝ կը յորդորէր զամենքը եւ կը զօրացներ հայկական գունդը:

Այս պտտճառաւ անցեր էր նաեւ Շիրակայ, որ այն ժամանակներ Կամսարականաց կը պատկանէր, եւ ուր Սուրէն իրեն ընկերացեալ զօրաց մեծ մասը Վարդանայ կերտ թողլով՝ փոքր խումբով Վարդանաբերդ եկած էր Կամսարական իշխանին թախանձանոք, որպէսզի աւելի հանգիստ ըլլէ:

Հազիւ թէ սաղաւարտը թողէր էր Թեոդորոս՝ կապոց մը գիշերային զգեստներ բերին սպասաւորք եւ Յայոց զօրավարը բոլորովին սպառազինութիւնը թողած առաւ սամոյրը վրան եւ երբ կուզէր տարածուիլ բազմոցին վրայ հանգչելու համար, ներս մտաւ Սուրէն քրոջը հետ միասին: Մամիկոնեան Տիկինը կ'ուզար համառօտ եւ ազնիւ խօսքերով բարի գալուստ մաղթելու Յայոց զօրավարին: Թեոդորոս քաղաքավար եւ քաղցր շնորհակալութիւն յայտնեց իրեն եղած հիւրընկալութեան, մանաւանդ որ ինք միշտ կը յիշէր թէ ինչ սերտ բարեկամութիւն կը կապէր Մամիկոնեան Տիկինը իւր կնոջ հետ:

– Ես շատ ուրախ եմ, Տէր, պատասխանեց Տիկինը, որ Գրիգոր այս վայրկեանիս դառնալով Ռշտունեաց Ոստանէն, ինձ բարի Յուրեր տուաւ ձեր Տիկնոջ եւ գաւակաց վրայ: